Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2022թ.
դեկտեմբերի 24-ի թիվ 13 նիստում
Ռեկտոր Ռ. Հակոբյան
«24» դեկտեմբեր 2022թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գավառի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների պրակտիկաների անցկացման կարգի (այսուհետ՝ Կարգ) նորմատիվ իրավական հիմքերն են բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. Կարգի դրույթները վերաբերում են առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկաների բոլոր տեսակներին:

3. Կարգը սահմանում է պրակտիկաների կազմակերպման, անցկացման և գնահատման սկզբունքները, նպատակները, խնդիրները, գործընթացի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, պրակտիկաների արդյունքների ամփոփման և գնահատման կարգը:

4. Կարգը կարող է լրացվել և փոփոխվել համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

II. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Պրակտիկան կրթական գործընթացի պարտադիր բաղադրիչ է՝ ուղղված ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:

6. Պրակտիկայի կազմակերպման և անցկացման նպատակներն են՝

1) տվյալ մասնագիտության շրջանակներում մասնագիտական գործնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու ամրապնդումը,

2) ստացած գիտելիքների հիման վրա աշխատանքային կարողությունների ձևավորումը,

3) համապատասխան մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ ունակությունների ձեռքբերումը,

4) պրակտիկայի արդյունքների օգտագործումը ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պատրաստման համար:

7. Պրակտիկայի հիմնական խնդիրներն են՝

1) մասնագիտական կրթական ծրագրում ներառված դասընթացների գործնական բաղադրիչի խորացված ուսումնասիրությունը,
2) ընտրած մասնագիտության կիրառական հիմունքներին և առանձնահատկություններին տիրապետումը:

8. Պրակտիկան կարող է անցկացվել ինչպես համալսարանում, այնպես էլ համալսարանից դուրս՝ պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրի մեջ ներառված առարկաների առանձնահատկություններով:

III. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

9. Համալսարանը ուսանողների համար կազմակերպում է ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտամանկավարժական, գիտահետազոտական պրակտիկաներ.

1) ուսումնական պրակտիկան միտված է ուսանողների տեսական գիտելիքների ամրապնդմանը, գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը,

2) արտադրական պրակտիկան միտված է իրական գործընթացներում, արտադրության մեջ մասնագիտական կրթական ծրագրում ներառված դասընթացներից ուսանողների ստացած գիտելիքների փորձարկմանն ու ամրապնդմանը, մասնագիտական աշխատանքի համար անհրաժեշտ գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը,

3) մանկավարժական պրակտիկան ուղղված է ուսանողների՝ որպես ապագա ուսուցիչների մոտ աշակերտների հետ աշխատելու կարողությունների ձևավորմանը, մանկավարժական փորձառության ձեռքբերմանը և փորձուսուցմանը,

4) նախաավարտական պրակտիկան ուղղված է ավարտական աշխատանքի ուսումնասիրության առարկայի հետազոտության իրականացմանը և պաշտպանության նախապատրաստմանը: Նախաավարտական պրակտիկան կազմակերպվում է ըստ ուսումնական պլանում նշված ժամկետների՝ ուսումնառության վերջնական փուլում: Նախաավարտական պրակտիկայի անցկացման վայրը որոշվում է մասնագիտական ամբիոնում՝ ըստ մասնագիտության առանձնահատկության,

5) գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է մագիստրատուրայի ուսանողների՝ մանկավարժական գործունեություն իրականացնելու կարողությունների զարգացման նպատակով,

6) գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է անհատական կարգով և բխում է մագիստրոսական թեզի պահանջներից ու բովանդակությունից, անհատական հետազոտական աշխատանքի պլանից:

IV. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի բոլոր մասնագիտությունների ուսանողների ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաները, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողների գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպում և վերահսկում է համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժինը՝ դեկանատների հետ միասին:

11. Պրակտիկայի կազմակերպման գործընթացին մասնակցում են ամբիոնները, որոնց կողմից նախապես մշակվում և հաստատվում են պրակտիկայի ծրագրերն ու պլանները:
12. Պրակտիկայի տեսակները, տևողությունը և ժամկետները որոշվում են համապատասխան ուսումնական պլաններով՝ ըստ մասնագիտությունների:
13. Պրակտիկաները կազմակերպվում և անցկացվում են մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպություններում, ձեռնարկություններում՝ նախապես կնքված երկկողմանի պայմանագրերի հիման վրա:
14. Այլ վայրում պրակտիկայի կազմակերպումն իրականացվում է համապատասխան ֆակուլտետի դեկանին ուղղված ուսանողի դիմումի հիման վրա՝ ընդունող հաստատության ղեկավարի համաձայնությամբ:
15. Պրակտիկան սկսելուց առաջ կազմակերպվում է տեղեկատվական հանդիպում ուսանողների և պրակտիկայի պատասխանատուների մասնակցությամբ՝ պարզաբանելու պրակտիկայի նպատակները, խնդիրները, անցկացման կարգն ու ժամկետները, օրագրերի լրացման կարգը, պրակտիկանտ ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:
16. Տվյալ մասնագիտությամբ աշխատող կամ համապատասխան աշխատանքային փորձ ունեցող ուսանողների համար նախաավարտական պրակտիկան ևս պարտադիր է:

V. ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑՆՈՂ ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Պրակտիկա անցնող ուսանողի իրավունքներն են՝
    1) ծանոթանալ պրակտիկայի անցկացման կարգին և ներկայացվող պահանջներին,
    2) ծանոթանալ պրակտիկայի ընթացքում հաստատության աշխատանքային պլաններին, պայմաններին ու հնարավորություններին, կազմել անհատական աշխատանքային պլան,
    3) մասնակցել հաստատության կազմակերպած միջոցառումներին, հանդես բերել նախաձեռնություն և ստեղծագործական մոտեցում,
    4) ինքնուրույն ընտրել աշխատանքի թեման, տեսակները և ձևերը:
18. Ուսանողը պրակտիկայի ընթացքում պարտավոր է՝
    1) կատարել պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները,
    2) ենթարկվել պրակտիկան իրականացնող հաստատության աշխատանքային, անվտանգային, էթիկայի կանոններին, ներքին կանոնակարգերին,
    3) պրակտիկայի օրագրում կատարել համառոտ գրառումներ պրակտիկայի անցկացման ընթացքի վերաբերյալ, յուրաքանչյուր գրառում ամրագրել համապատասխան ամսաթվով և ապահովել գրառումների հաստատումը ղեկավարի կողմից՝ ստորագրությամբ,
    4) Պրակտիկայի ավարտից հետո օրագիրը ներկայացնել համապատասխան ամբիոն և պաշտպանել պրակտիկայի արդյունքները:

VI. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժինը համակարգում է պրակտիկայի կազմակերպչական և ընթացիկ աշխատանքները՝ ապահովելով կապ դեկանատների, ամբիոնների, ուսանողների և ընդունող կազմակերպությունների միջև:

20. Ակադեմիական քաղաքականության բաժինը

1) ամբիոնների հետ կազմակերպում է մեթոդական խորհրդատվություն պրակտիկայի անցկացման վերաբերյալ,
2) ուսանողներին ապահովում է համապատասխան օրագրերի նմուշ օրինակներով,
3) դեկանատներին տրամադրում է համալսարանի հետ պրակտիկայի անցկացման վերաբերյալ պայմանագրեր կնքած կազմակերպությունների ցանկը,
4) վերահսկում է պրակտիկայի մեթոդական ապահովումը,
5) իրականացնում է պրակտիկայի պաշտպանության գործընթացի վերահսկողություն:

21. Համալսարանի համապատասխան ամբիոնը քննարկում և ներկայացնում է պրակտիկայի ղեկավարի (պատասխանատուի) թեկնածությունը, որը հաստատվում է ռեկտորի հրամանով:

22. Ղեկավարի համար պրակտիկան կազմում է ակադեմիական ծանրաբեռնվածության մաս:

23. Պրակտիկայի ղեկավարն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է պրակտիկայի ընդհանուր ղեկավարումը,
2) վերահսկում է ուսանողի կողմից պրակտիկա անցնելու գործընթացը և տրամադրում մեթոդական օգնություն,
3) ուսանողների հետ անցկացնում է նախնական խորհրդատվություն և պարզաբանում պրակտիկայի նպատակները, տալիս է տեղեկատվություն դրա անցկացման ժամկետների, առանձնահատկությունների, ուսանողների պարտականությունների և ընթացիկ ու վերջնական հաշվետվությունների ձևերի մասին,
4) պրակտիկայի ավարտից հետո ամբիոն է ներկայացնում հաշվետվություն պրակտիկայի կազմակերպման և անցկացման արդյունավետության, ծագած խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկներ գործընթացի բարելավման ուղղությամբ (Հավելված 1):

24. Ընդունող հաստատություններում նշանակվում են պրակտիկայի ղեկավարներ՝ ստորաբաժանումների ղեկավարներից կամ փորձառու աշխատակիցներից, ովքեր ոսանողներին ծանոթացնում են հաստատության ներքին աշխատանքային կանոնակարգերին, պրակտիկայի անցկացման կարգին:

25. Պրակտիկայի ավարտին համալսարանի և հաստատության կողմից նշանակված ղեկավարները ստորագրում են օրագիրը և վավերացնում այն:

VII. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

26. Պրակտիկայի գնահատումն իրականացվում է պրակտիկայի ընթացքում ուսանողի կողմից ձեռքբերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգմամբ՝ «Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման» կարգի 5-րդ և «Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգի» 24-րդ կետերին համապատասխան:

27. Պրակտիկաների գնահատման համար հիմք են հանդիսանում ուսանողի մասնակցությունը պրակտիկային, կազմած օրագիրը, հաշվետվության որակը և բովանդակությունը, ինչպես նաև պրակտիկայի արդյունքների պաշտպանության որակը, պրակտիկայի ընթացքում նրա ցուցաբերած ինքնուրույնությունը և ակտիվությունը:

28. Պրակտիկաները գնահատվում են ստուգարքով կամ քննությամբ: Ստուգարքի կամ քննության արդյունքներն անցկացվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ:

29. Յուրաքանչյուր կիսամյակի կամ ուսումնական տարվա վերջում համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից իրականացվում են պրակտիկաների անցկացման արդյունավետությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, վերլուծվում են արդյունքները և ներկայացվում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը, որից հետո հանձնարարվում է համապատասխան կրթական ծրագրի ղեկավարին ու դեկանին՝ ներկայացնել գործընթացի բարելավման գործողությունների պլաններ (Հավելված 2):

30. Ուսանողը պրակտիկան «չստուգված» կամ «անբավարար» ստանալու կամ չմասնակցելու դեպքում, բացի նախաավարտական պրակտիկայից, իրավունք ունի դիմել ֆակուլտետի դեկանին պրակտիկան կրկին անցնելու թույլատվության համար՝ առանց ուսումնական պարապմունքներից կտրվելու, և վճարում է գումար սահմանված կրեդիտների արժեքի չափով:

31. Նախաավարտական, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ չանցած ուսանողները հեռացվում են համալսարանից՝ ուսանողական իրավունքները վերականգնելու և պրակտիկան կրկին անցնելու հնարավորությամբ:

Հավելված 1.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ուսանողների պրակտիկայի ղեկավարի հաշվետվության ձևաթերթ

Ֆակուլտետը _____

Կրթական աստիճանը _____

Մասնագիտությունը _____

Կուրսը _____

Պրակտիկայի տեսակը և անցկացման ժամանակահատվածը _____

_____

Պրակտիկայի անցկացման վայրը, կազմակերպության անվանումը _____

_____

1. Պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից կատարված աշխատանքի բովանդակությունը

_____

_____

_____

_____

2. Պրակտիկայի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքի նկարագրությունը և արդյունքների վերլուծությունը

_____

_____

_____

_____

_____

3. Ինչպիսի՞ գործնական գիտելիքներ են ձեռք բերել ուսանողները պրակտիկայի ընթացքում

_____

_____

_____

4.Ինչպիսի՞ կարողություններ և հմտություններ են ձեռք բերել ուսանողները պրակտիկայի ընթացքում

_____

_____

_____

5.Ինչպիսի՞ բացթողումներ և թերություններ են արձանագրվել պրակտիկայի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքում

_____

_____

_____

6. Ի՞նչ դիտողություններ և առաջարկություններ են եղել կազմակերպության կողմից

_____

_____

_____

7. Առաջարկություններ պրակտիկայի ծրագրի բարելավման, տևողության վերանայման, անցկացման ընթացքի վերաբերյալ

_____

_____

_____

Պրակտիկայի ղեկավար՝ _____

(Անուն, ազգանուն, ստորագրություն)

_____

(ամսաթիվ, ամիս, տարեթիվ)

Հավելված 2

Ուսումնական, **մանկավարժական**, **արտադրական**, **գիտամանկավարժական**, **գիտահետազոտական**, **նախաավարտական**, **պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ**

Հարգելի՛ ուսանող, սույն հարցման նպատակն է գնահատել Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) կողմից կազմակերպվող նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի որակը և արդյունավետությունը:

Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն ընդհանրացված ձևով՝ գործընթացի որակը բարելավելու նպատակով, ուստի խնդրում ենք գնահատել օբյեկտիվորեն:

1. **Ընդհանուր տեղեկություններ**
   1.1. Ֆակուլտետը՝
   1.2. Կրթական աստիճանը՝ բակալավրիատ/մագիստրատուրա
   1.3. Մասնագիտությունը՝
   1.4. Կուրսը՝
   1.2. **Ընտրել պրակտիկայի տեսակը.**
   - Մանկավարժական
   - Ուսումնական
   - Արտադրական
   - Գիտամանկավարժական
   - Գիտահետազոտական
   - Նախաավարտական
2. **Ո՞ր կազմակերպությունում եք անցկացրել Ձեր պրակտիկան**

   _____

   Նշել կազմակերպության իրավական ձևը.
   - Մասնավոր
   - Պետական
3. **Խնդրում ենք ստորև ներկայացված հարցադրումները գնահատել** 1-5 **միավորանոց համակարգով**, **որտեղ** 5-**ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է**, 1-**ը՝ ամենացածր:**

4.1. Պրակտիկայի նպատակը հստակ էր ինձ համար

1	2	3	4	5

4.2. Պրակտիկան օգտակար էր տեսական գիտելիքները կատարելագործելու առումով

1	2	3	4	5

4.3. Պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների և հմտությունների զարգացման առումով

1	2	3	4	5

4.4. Պրակտիկան կազմակերպված էր պատշաճ կերպով

1	2	3	4	5

4.5.Պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար

1	2	3	4	5

4. **Որքանո՞վ էր արդյունավետ պրակտիկան**

5.1.Պրակտիկան շատ արդյունավետ էր

1	2	3	4	5

5.2.Պրակտիկայի անցկացման ընթացքը վերահսկվում էր ամբիոնի կողմից

1	2	3	4	5

5.3.Գործատուները պատասխանատու կերպով էին վերաբերում պրակտիկայի կազմակերպման գործընթացին

1	2	3	4	5

5. **Խնդրում ենք ներկայացրեք Ձեր առաջարկությունները**, **նկատառումները**, **պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացը բարելավելու համար**

_____

_____

Շնորհակալություն

(ամսաթիվ, ամիս, տարեթիվ)

_____